**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 սեպտեմբերի 2014թ. թիվ 339-Ա

ԱՇՈՏ ՍԵՐԳԵՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ
«ՎԱՀԱԳՆԻԻ Մ. ՔՈՉԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշմամբ հաստատված կարգի 71-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Վահագնիի Մ. Քոչինյանի անվան առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 5 որոշումը, հաշվի առնելով Ա. Հակոբյանի դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Աշոտ Սերգեյի Հակոբյանին նշանակել «Վահագնիի Մ.Քոչինյանի անվան առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով 2014 թվականի սեպտեմբերի 25-ից:
2. Ա.Հակոբյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. սեպտեմբերի 24
ք.Վանաձոր